

94

2

Հայր Կր.

ՄԱՃԿԱՆ՝ ԳՐԱԴԱՐԱՆ

18

ԳԵՎՈՐԳ ԳՐԶԵԼՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ԶՈՌ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

(Պատկերազարդ)

Խմբագրություն
Խ. ՅԵՐԻՑՅԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Զ. Կ. Կ. ԿՈՍԻՏԵՅԻ
ՅԵՐԵՎԱՆ 1923 թ.



980ԻՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱ — № 4
102-622


10-10-10 2017

“ՄԱՃԿԱՆ”-Ի ԳՐԱԴԱՐԱՆ ...

ԳԵՎՈՐԳ ԳՐԶԵԼՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ ԶՈՌ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

(Պատկերազարդ)



Խմբագրության
Խ. ՅԵՐԵՅՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱՆՈՒՄ ԵՐԵՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. Կ. Կ. ԿՈՄԻՏԵՅԻ
ԵՐԵՎԱՆ



Բամբակի «չոռ» հիվանդության այս տար-
վա յերևան գալն ու լայն տարածվելը Հայաս-
տանում, հարկադրեց խմբագրությանս, դիմել
մեր համալսարանի բույսերի հիվանդություն-
ների գասախոս Գ. Գրձեղյանին՝ շտապ կերպով
կազմելու չոռի մասին մի ժողովրդական գրքույկ:
Գրքույկս պետք և սովելի շուտ լույս բնծայվեր,
սակայն վորովհետև պիտի պարզվեր այդ հի-
վանդության եռությունը մեզնում, (կան հեղի-
նակներ, վորոնք այդ հիվանդության հետ խառ-
նում են զանազան հիվանդություններ), ուստի
կարիք զգացվեց վորոշ գիտությունների և
լաբորատորիական անհրաժեշտ աշխատանքի: Այդ,
և միշտք տեխնիքական անհարմարությունների
շնորհիվ, ուշացավ գրքույկիս տպագրությունը:

Հիվանդության նշանները և հիվանդությու-
նըն առաջ բերող տիգի *Tetranychus telarius* է)
նկարները պատրաստվել են իսկականից Գյու-
ղատնտեսական լաբորատորիայում նկարիչ Ախի-
կյանի ձեռքով, Գեփարգ Գրձեղյանի անմիջական
ղեկավարությամբ:

Խմբագրություն

ԲԱՄԲԱԿԻ ԶՈՌ ՀԻՎԱՆ- ԴՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ և «չոռ»-ը «Չոռ» ասելով հայ ժողո-
վուրդը հասկանում և ցավ, հիվանդություն. ո՞վ
չի լսել կանանց բերնից «չոռ ու ցավ» անեծքը:

Այդ ձևով էլ, յերբ ասում են բամբակի «չոռ»,
կամ խաղողի «չոռ», հասկանում են բամբակի
կամ խաղողի ցավ, հիվանդություն: Մանավանդ
այդպես էլին հասկանում սրանից սուաջ, յերբ
զանազան հիվանդությունների, զանազան «չո-
ռների» մեջ տարբերություն չեյին դնում: Բամ-
բակին չոռ և տվել», ասում էին, առանց ուշա-
դրություն դարձնելու, թե ինչ չոռ և տվել-
դրանով պարզ ուզում էին ասել, թե բամբակը
հիվանդացել և:

Բայց յերբ տեսան վոր «չոռ» էլ կա, «չոռ»
էլ, վոր կա «չոռ», վոր բամբակն ամբողջովին
վոջնչացնում և, իսկ կա «չոռ», վոր համարյա
վոջ մի փնաս չի սալիս, այն ժամանակ մեր
ժողովուրդն սկսեց տարբերել հիվանդություն-
ները. և մի հիվանդությունն անվանեց «չոռ»,
մյուսը՝ «չիրա» կամ «միգ», յերբորդը՝ «թըր-
թուռ» և այլն. ինչպես և խաղողի վրա մի հի-



11-249591

վանդություն սկսեց կոչել «չոռ», մյուսը՝ «սև» կամ «թող» և այլն:

Ի՞նչ է «բամբակի չոռը»: Ժողովուրդը նրկատեց, վոր բամբակի հիվանդությունների մեջ կա մեկը, վորն ամենից շատ է վնաս հասցնում բամբակ ցանողներին. այդ հիվանդությունն է սկսեց անվանել «չոռ». և այս բույերիս այն բույոր մարդիկ, վորոնք տարիների ընթացքում բամբակ են ցանել և բամբակի հետ դործ ունեցել, միայն մի հիվանդություն է, վոր անվանում են «չոռ», և վոչ մի ուրիշ հիվանդություն չեն խառնում այդ «չոռ»-ի հետ: Մնացած հիվանդությունների համար կամ ուրիշ անուն են տալիս, կամ պարզապես ասում են, թե «սա չոռ չէ»: Ուրեմն «չոռ»-ը ժողովրդին միանգամայն հայանի յե ու վորոշ. դա մի հիվանդություն է, և վոչ թե մի քանի դանադան հիվանդությունների խառնուրդ, ինչպես վոր շատերն այդպես կարծում են կամ նույնիսկ գրում: Յեվ յերբ մի անգամ մարդ առիթ ունենա տեսնելու այդ հիվանդությունը, նա այլևս չի կարող խառնել այն ուրիշ հիվանդություններին հետ, քանի վոր «չոռ»-ը շատ խորոշ հիվանդություն է:

«Չոռ»-ը տերևների հիվանդություն է. յերբ նոր է սկսում՝ մի տերև հիվանդանալ, այդ տերևի վրա առաջ է գալիս յերեսի կողմից մի փոքրիկ, մուգ կարմրավուն, բոլորաձև կամ անկունավոր բիծ, խալ կամ պուտ: Այդ խալը

առաջ է գալիս միայն տերևի կանաչ մասի վրա, ջլերի արանքներում և յերբեք առաջ չի գալիս տերևի ջլերի վրա: Այդ կարմիր բիծը կամաց-կամաց մեծանում է և կարող է այնքան մեծանալ, վոր բունի ամբողջ տերևի նույնիսկ յերբ քառորդ մասը: (տես նկ. 1 և 3)



Նկ. 1. Վարակված տերև յերեսի կողմից (բնականից)

Յեթե այդ մեծ խալը (պուտը, բիծը) լավ նայելու լինենք, կտեսնենք, վոր դա իսկապես մի խալ չէ, այլ վերև հիշած շատ մանր անկունավոր կամ բոլորաձև խալերի միացումն է,

ների տակ առաջացած չորի վոստայնն ավելի պարզ նկատելի յե դառնում, վորովհետև այդ վոստայնի թելերը ծածկվում են ճանապարհի փոշով: Շուտով տերեր կուշ և գալիս, վորովում և ներքևի յերեսի վրա և չորանում:

Այդ ձևով չորանում են բամբակի փոշ թե մեկ կամ յերկու, այլ բոլոր տերերները. ուստի չորանում և նաև ամբողջ սունկը:



Նկ. 4. Յերբորդ նկ. տերեր տակի կողմից (բնականից)
Խնչից և առաջ գալիս բամբակի «չոր»

հիվանդությունը: — Յեթե չորոտ բամբակի տերերները ուշադրությամբ նայելու լինենք տակի կողմից՝ մոխրագույն մասի վրա, հյուսած վոստայնի տակ կտեսնենք շատ մանր կենդանիներ, վորոնցից շատերը անշարժ են, իսկ շատերն արագ կերպով վազվզում են վոստայնի թելերի կամ տերերի վրա: Այդ կենդանիները սարգի նրման են, ունին չորս գույգ վոս (տես նկ. 5, 6 և 7), մարմինը՝ կարճ, ձվաձև (թեև մի քիչ ավելի յերկարացած, քան իսկական ձվի ձևն է), բերանը հարմարեցված և ծծելուն, ինչպես մոծակինը, և փոշ թե՛ ծամելուն (ինչպես շերամի վորդինը) կամ լիզելուն (ինչպես ճանճինը): Այդ փոքրիկ սարգանման կենդանին կամ տիզը յուր կնճիթը մտցնելով տերերի մեջ, ծծում և նրա հյուսթը և այդ ձևով առաջ և բերում տերերի յերեսի վրա կարմրություն: Այդ տիզն է, վորից բույսը ուժառույտ և լինում ու չորանում: Ի հարկե, յեթե տերերի վրա միայն մի հատիկ տիզ լիներ, փեսար շատ աննկատելի կարող էր անցնել, բայց վորովհետև ամեն մի տերերի վրա շատ են լինում, ուստի տերեն ել շուտ և չորանում:

Այդ տիգերը սովորութեամբ ունեն սարդի նման վտատոյն հյուսելու, փորի մասին մի քիչ տառջ խոսեցինք:



Նկ. 5. «Չոռի» տիգը մեջքի կողմից (բնականից)
խիստ մեծացրած

Տիգի գույնը գանազան է. բայց ընդհանրապես դեղին-կարմրավուն է կամ դեղին-կանաչավուն: Մարմինը փափուկ է և ծածկված կոշտ և ցրված մաղերով:

Ի հարկե, այս բոլորը հասարակ աչքով չի կարելի տեսնել, անհրաժեշտ է մի փոքրիկ խոշորացույց, փրպեպի լավ ճանաչվի կենդանին:

Հասարակ աչքով կարելի չէ տեսնել միայն այն, փոր իսկապես մանր, չարժուէ կենդանիներ կան և ուրիշ փոշին:

Այդ մանր կենդանիները ձու լին ածում ամեն մեկը մոտավորապես 40 60 հատ, ձվից դուրս յեկածները նման են ձու ածողներին, այն տարրերութեամբ, փոր ձու ածողները, այսինքն հասունացածները կամ չափահասներն ունենում



Նկ. 6. «Չոռի» տիգը փորի կողմից (բնականից)
խիստ մեծացրած:

են չորս գույզ փուտ, իսկ ձվից նոր դուրս յեկածները՝ մինչև չափահաս դառնալն ունենում են միայն յերեք գույզ փուտ: Չու գնելուց մինչև ձվից կենդանի դուրս գալն անցնում է 4-ից մինչև 7 ուր, նայած յեղանակներին: Շոգ ժամանակ ավելի կարճ միջոց է պահանջվում ձվից դուրս գալու համար, քան համեմատաբար ցուրտ յեղանակին: Անչափահասները մի քանի անգամ

շապիկ փոխելով 5-7 անգամ ընթացքում դառնում են չափահասներ և սկսում են ձու տծել: Այսպիսով ամառվա ընթացքում «չու» առաջացնող կենդանին՝ տիգը, բազմաթիվ սերունդներ է տալիս, և փորշափ յեղանակը չոր և տաք է, այնքան թե սերունդների քանակը և թե յուրաքանչյուր սերնդի ածած ձվի քանակը ավելի շատ է լինում:



Նկ. 7. Տիգի սրտածառիկ նկարը ըստ Վալերի Մայիլի:

Աշնանը տիգերն իջնում են ու պահվում բամբակի, վայրի կամ բանջարանոցային բույսերի արժառանքի մոտ, կամ թաղնվում են ալգիների ծառերի կեղևների տակ և այդ ձևով ձմեռն անցկացնում:

Ինչպես յեվ ինչ պայմաններումն է զարգանում բամբակի «չու»-ը: Գյուղատնտես Հովսեփ Աթաբեկյանը գրում է 1912 թ. «Զոո»-ը յերևում է՝

1. Այն ուժասպառ հողերում, փորտեղ մի քանի տարի շարունակ բամբակ է ցանված լինել:

2. Վատ մշակված և քաղհանք կոխած հողերում:

3. Առատ կերպով ջրած հողերում:

4. Հիվանդությունը, յեթե արդեն սկսվել է, արագ կերպով կաճի և կտարածվի, յեթե յեղանակը սաստիկ շոգ է, և կարող է կանգ առնել, յեթե նման շոգից հետո առատ անձրևներ դառն:

Հիվանդությունը չի տարածվում, կամ շատ քիչ փառ է տալիս այն հողերում՝

1. փորտեղ բամբակից առաջ յեղել և առվույտ (յոնջա)

2. փորտեղ բամբակից առաջ յեղել և չալթուկ,

3. փորը պարարտացվել և աղբով կամ այլ պարարտանյութով:

4. փորակը բամբակը ցանվել է ցել անե-
լուց և լավ մշակելուց հետո:

Հիշյալ Աթաբեկյանի և ուրիշ շատերի նը-
ման դիտողություններից կարող ենք յեզրա-
կացնել, թոր «չորը» տարածվում է և փասս է
տալիս բամբակի այն տնկիներին, փորոնք լավ
չեն աճում, ուժեղ չեն, նվազ են, լավ անունդ
չեն ստանում և հիվանդատ են. փոր «չորի» տիզը
թեև կարող է նստել փարթամ և առողջ տնկու-
տերևի վրա, բայց տերևին մեծ փասս չի հասցնի,
փորովհետև վերջինս կարողանում է պաշտպան-
վել տիզի դեմ:

Յեղ իսկապես, չորը յերևում է ուժասպառ,
վաս մեակված յեղ փողիանք կոխած հողերում,
փորովհետև այդ հողերում բամբակը լավ չի
աճում, մնում է թույլ:

Չորը տարածվում է «առաս կերպով ջրած
հողերում», փորովհետև այդպիսի պայմաններում
բամբակը լավ չի աճում, թույլ է մնում. և իս-
կապես փոր բամբակ մշակողին հայտնի չէ, փոր
բամբակը շատ շուր չի սիրում, փոր ավելի լավ
է միքիշ չոր պահել բամբակը, քան թե ջրից
առատ պահել:

Չորը չի տարածվում, կամ քիչ փասս է
հասցնում այն հողերում, փորակից բամբակից
առաջ յեղել է առվույս, չալթուկ, կամ թե՛ այդ
հողերը պարսպացրվել են կամ ցելից հետո

լավ մեակվել: Ինչու, փորովհետև այդպիսի հո-
ղերում բամբակը լավ է աճում, լավ է զարգա-
նում ու փարթամանում և հնարավորություն
ունի տիզի դեմ կռվելու:

Չորային յեղ սոս յեղանակներին «չոր»
աս է զարգանում, փորովհետև ինչպես մենք
վերև արգեն առացինք, չոր է առաջ յեղանակին
բամբակի «չորն» առաջացնող տիզն ավելի արագ,
լավ է զարգանում և շատանում:

Ինչ վնաս է հասցնում «չոր» բամբա-
կին. Հայաստանի բամբակ մշակողներին կա-
րիք չկա բացատրելու, թե ինչ վնաս է հասցնում
«չորը» բամբակին, փորովհետև դրանք բոլորն
ել գիտեն, փոր շատ հաճախ մարդիկ ձեռք են
քաշել իրենց այն արտերից, ուր «չոր» է մտել:

Չորի հետևանքով չորանում են տերևները,
փորոնք ինչպես բոլորն ել գիտեն, բույսի ամե-
նակարևոր մասն են. առանց տերևների բույսը
հնարավորություն չունի աճելու, ուստի և չո-
րանում է: Բայց յեթե բոլոր տերևները չչորա-
նան, այլ միայն մի մասը, այն ժամանակ ծա-
ղիկների մի մասը կմնա տնկու վրա, իսկ մյուսը
կթափի, փորովհետև մնացած տերևները
հնարավորություն չեն ունենա բոլոր ծաղիկները
կերակրելու, բերքը կպակասի: Բացի բերքի պա-
կասելուց, բամբակի թելերն ել կլինեն վատ փո-
րակի, փորովհետև չորանալուց ազատ մնացած

տերևները հնարավորութիւնն չեն ունենա լավ
կերակրել մնացած կնգուղներին:

Բամբակի «չոռի» տիգր միայն բամբակի
վրա՞յն լինում, թե նաեմ ուրիշ բույսերի վրա:
Բամբակի «չոռի» տիգր միայն բամբակի վրա
չի լինում, այլ մի շարք թե վայրի և թե մշակ-
վող բույսերի վրա: Նա լինում է խաղողի տե-
րևների վրա, վորտեղ նույնպիսի կարմրութիւնն
է առաջ բերում, ինչպիսին է բամբակի վրա:
Նա լինում է մի շարք բանջարանոցային բույսե-
րի վրա, ինչպես են՝ վարունգի, լոբու տերևնե-
րի վրա, վորտեղ առաջ է բերում վոշ թե կար-
մրութիւնն, այլ գորշ գեղնութիւն: Նա լինում
է ջերմոցներից զանազան բույսերի վրա, խնձո-
րենու, տանձենու և այլ ծառերի վրա, ինչպես
և վայրի բույսերից պտտասուղի և այլոց վրա:
Յեւ այդ տիգր լինում է միայն այն բույսերի
վրա. վորտեղ վորտե պատճառով ուժեղ չեն ա-
ճում, այլ մնացել են թույլ: «Չոռ» ընկած այդ
բոլոր բույսերն իրար նմանվում են վոշ թե տե-
րևի վերևի կողմից առաջացած խալի գոյնով,
վորը կարող է զանազան լինել զանազան բույսե-
րի վրա (կարմիր, թուխ, գորշ, գեղնավուն և
այլն), այլ տերևի տակի կողմից առաջացած
վարակույն պուտով, վորը մշտական ծածկված
է լինում բարակ վոստայնով: Վոստայնն էլ ամեն
տեղ միատեսակ չի լինում. յեթե տերևը մա-

ղաւ է, գործած վոստայնն էլ շատ բարակ է լի-
նում, ընդհակառակն յեթե տերևը հարթ է, ա-
ռանց մաղի, վոստայնը ավելի խիտ է գործված
լինում, վորպեսզի տիգն ավելի լավ պաշտպան-
վի նրա մեջ:

Խնչպես կուլել բամբակի «չոռ»ի դեմ.

«Չոռի» դեմ կուլելու համար յերկու ճանա-
պարհ կա:

Առաջինն այն է, յերբ աշխատում են, վոր
հիվանդութիւնը բոլորովին չերևա, կամ յե-
րկուսու դեպքում, հնարավորութիւնն չունենա
վնասելու մեր բամբակին:

Յերկրորդն այն է, յերբ աշխատում են վո-
շընչացնել հիվանդութիւնը, յեթե նա արդեն
յերևացել է մեր արտերում:

Առաջին դեպքում մենք հիվանդութեան ա-
ռաջն ենք առնում, իսկ յերկրորդ դեպքում՝
բույսը բժշկում ենք հիվանդութիւնից:

Հիվանդութեան առաջն առնելու համար մենք
մեր բամբակը պիտի այնպես մշակենք, վոր
հիվանդութիւնն առաջացնող տիգն այլևս չկա-
րողանա դարդանալ:

Մենք մի քիչ վերև ասացինք, թե ինչ պայ-
մաններում է զարգանում «չոռ»-ը. յեթե աշխա-
տենք, վոր այդ պայմանները տեղի չունենան,
զրանով մենք կոված կլինենք «չոռի»:

Այսպես. չպէտք բամբակը մի բանի տա-



ըի իրար յետևից ցանել միևնույն հողում, փորովհետև հողն ուժասպառ է լինում. իսկ մենք տեսանք, փոր ուժասպառ հողում բամբակը լավ չի աճում, թույլ է մնում, իսկ վատ աճող և թույլ բամբակին «չոռը» հեշտությամբ է աղ-դում:

Պիտի մաքուր պահել բամբակի արտը, չը-պետք է թողնել, փոր քաղհանը կոխի դրան: Կա-րիք չկա ապացուցելու, թե ինչ մեծ նշանակու-թյուն ունի քաղհանելը բամբակի աճեցողության համար. բավական է, փոր համեմատենք յերկու իրար կողքի դանված արտեր, փորոնցից մեկը քաղհանված լինի, մյուսը վոչ, փորպեսզի մի անգամից համոզվենք, փոր առանց քաղհանելու յերբեք չի կարելի ուժեղ և փարթամ բամբակ ունենալ: Շատերը զուռ են տալիս ջրին. ջրի ու-ժով են ուզում բամբակը բուսցնել և մոռանում են քաղհանը: Բայց ավելի լավ է մի անգամ քաղհանել, քան յերկու անգամ ջրել:

Պիտի լավ մշակել հողը, փորպեսզի լավ, ու-ժեղ բամբակ ստանանք: Արորի վարը (այն էլ միայն գարնան վարած) չի կարող յերբեք ուժեղ բամբակ տալ: Հողը պիտի նախորոք պատրաս-տել, պիտի աշնանավար անել. դերպասելի յե-ցելը գարնանը կլկնավար անել, փորպեսզի բեր-քը հավաքելու ժամանակ կարելի լինի տուել, թե «հալալ է աշխատողին»:

Պիտի պարարտացնել հողերը՝ լավ և առողջ

բերք ունենալու համար, իսկ հողերը պարար-տացնելու համար պիտի գործածել անասունի աղբը, մսխիբը և այլն:

Պիտի աշխատել բամբակը ցանել առվույտից (յետնջից) կամ չալթուկից հետո, փորովհետև աղբպիտի հողերը պարարտացած են լինում, և բամբակն ուժեղ է աճում:

Պիտի ժամանակին ջրել բամբակը, փորպես-զի չչորանա և չթուլանա. սակայն չպիտի շատ հաճախ ջուր տալ, փորովհետև շատ ջրից ևս, ինչպես վերև ասացի, բամբակը թուլանում է, վատ է աճում, ուստի «չոռը» շատ ուժեղանում է:


Այս ամենը պիտի անել ուժեղ և առողջ բամբակ ունենալու համար: Սակայն յեթե հա-կառակ մեր կամքի հնարավորություն չենք ու-նեցել ուժեղ և փարթամ բամբակ ունինալու, կամ թե՛ նոյնիսկ ուժեղ արտերումն ել «չոռ» յերևա, պիտի կոպենք «չոռի» դեմ, բժշկելով բամբակը:

Ի՞նչպես պիտի բժշկենք. Պիտի այնպիսի դեղ ցանենք մեր բամբակի վրա, փորից ինքը, բամբակը չվնասվի, բայց վնասվի, փոխհանա «չոռն» առաջացնող տիգը:

Ծծումբն (sulfur) է այն գլխավոր դեղը, վորով մենք կոպում ենք բամբակի «չոռի» դեմ:

Բայց ծծումբ էլ կա, ծծումբ էլ, Ծծումբ կա, փոր ստացվում է ծծմբի խոշոր կտորներ

աղալուց, և ծծումբ կա, վոր ստացվում և ողու նման քաշելով. այսինքն ծծումբը տաքացնում են հատուկ շինություններում, վորտեղ նա նախ դառնում և հեղուկ, ապա ողու գոլորշու նման՝ գազ. այդ գազը հատուկ խողովակներով տանում են մի այլ շինություն, վորտեղ նա սառնում և և գառնում և մանր փոշի: Այս ձևով ստացված ծծմբափոշին կոչվում և թորած ծծումբ կամ ծծմբածաղիկ. և ահա այս թորած ծծումբն և վոր ամենից լավն է. և յեթե նույնիսկ յերկու, անգամ ավելի թանգ լինի թորածը աղած ծրծումբից, պիտի գնել թորած ծծումբ և դա գործածել:



Նկ. 8. Չեռքի փութ:

Գործածել կարելի չե չոր կամ թաց: Չոր գործածելու համար ծծմբափոշին ամուսն են ձեռքի կամ մեջքի փութի մեջ (տես Նկ. 8 և 9): Ի հարկե գերադասելի չե մեջքի փութը, վորովհետեւ գործը և արագ և կատարվում, և աշխատողն ավելի քիչ և հոգնում. և փչում են բամբակի վրա աշխատեա, վոր շատ բարակ շերտով բամբակի տերևները ծածկվին փոշիով:



Նկ. 9. Շալակի փութ:

Ծծումբը կարելի չե միշտ ել փչել, բայց գերադասելի չե փչել առավույսն ժամերին: Ծծումբը թաց գործածելու համար՝ պատրաստում են հետևյալ ձևով.

Վերցնում են 3 զրվանքա ալրած. բայց չհանգցըրած (քար) կիր և միքիշ ջրով հանդցնում են. հենց վոր կիրը կսկսի փոշի դառնալ, կամաց—կամաց սկսում են դրան ավելացնել $1\frac{1}{2}$ զրը—

վանքա ծծումբ և յեռման ջուր (այսինքն այն-
պիսի տաք ջուր, վոր յեռալիս լինի) և անդա-
դար խառնում են. այդ ձևով ընդամենը պիտի
սովեցանել 10 վեդրո յեռման ջուր: Ահա այդ
հեղուկն է, վոր թողնում են սառչի և սրսկում
են վորև և սրսկիչով, որինսկ Վերմորելի «եկ-
լեր» կեչված սրսկիչով (տես նկ. 10):

Թե չոր և թե թաց գործածելիս՝ «չոռի»
տիգի վրա ազդույր ծծումբն է. առաջին դեպքում
ի հարկե սովելի շատ ծծումբ և գնում, քան
յերկրորդ դեպքում:



Նկ. 10. Վերմորելի «եկլեր» սրսկիչը:

Ծծումբը չոր գործածելիս՝ դեպատինին
կգնա $1\frac{1}{2}$ փթից միշև 2, նույնիսկ 3 փութ:
Դա կախված է բամբակի մեծությունից, արտի
խառնությունից, փչող բանվորից և մեքենայի կա-
նոնավոր լինելուց:

Թաց գործածելու ժամանակ ամենաշատը
կգնա $1\frac{1}{2}$ փութ ծծումբ, բայց թաց սրսկելն այն
անհարմարությունն ունի, վոր ծծումբից մեքե-
նան շուտ է փչանում, ծայրի ծակը հաճախ
բռնվում է. այդ անհարմարությունը տեղի չի
ունենում, յեթե գործ են ածում չոր ծծմբա-
փոշին և փչում են փութսերով:

Բժշկությունը պետք է կատարել, հենց վոր
հիվանդությունը յերևա. և չպետք է թողնել, վոր
տարածվի. թե չէ՝ բժշկությամբ մենք չենք կա-
րող մեռածին հարություն տալ: Յեթե հիվանդու-
թյունն այնքան տարածվի, վոր բոլոր տերևները
կամ մեծ մասը չորանան, բժշկությամբ այլևս
վոչինչ չենք կարող անել: Պիտի բժշկել, հենց վոր
հիվանդությունը յերեվա:

Շատ անգամ մի բժշկություն բավական կը-
լինի բամբակի «չոռի» առաջն աննեյու համար,
բայց յեթե հարևանների մոտ չոռը դեռ տարած-
վում է, կարող է հարկավոր դալ յերկրորդ և
նույնիսկ յերրորդ բժշկությունը: Պիտի հետևել
հիվանդության զարգացմանը և ըստ այնմ, ամեն
անգամ վորոշել յերկրորդ և յերրորդ բժշկության
անհրաժեշտությունը:

«Զոռի» դեմ կռվելու համար կան և ուրիշ միջոցներ, վորոնք մեր յերկրում դեռ փորձի չեն յենթարկվել:

Մի միջատաբան կա, Ուվարով անունով՝ նա զրում ե, վոր Ամերիկայում մի վեղրո ջրին վերցնում են 3—4 զրվանքա ցորենի հասարակ ալյուր, սկզբում լավ խառնում են, ապա յեփում, հետո ածում են այդ բոլորը 12 վեղրո ջրի մեջ, խառնում են և սրսկում բամբակի արար:

Այդ ձևով պատրաստած ցորենի ալյուրը թուրքեստանում փորձել ե Վասիլե միջատաբանը և լավ հետևանքի յե հասել և իր ասելով ավելի լավ հետևանքի, քան ծծումբ զործածելով:

Բայց առայժմ, քանի վոր մեզ մոտ այդ փորձերը չեն արված, մեր յերկրի համար ամենափորձված և ամենալավ միջոցը բամբակի «չոռի» դեմ կռվելու համար՝ պիտի համարել թորած ծծումբը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0926310

44 94

11

24195

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՅԵԼ Խ. ՅԵՐԵ

«Մանկալ»-ի գյուղատնտեսական սերիայի հե-
տևյալ զրգուղիները.

1. Խ. Յերիցյան. Բնչալի սերմայու պիտի
ցանել (սպասված է):
2. Բամբակի և կաղամբի փաստառները:
3. Ն. Բազյանով. Էնտանի կենդանիների քոսը:
4. Գ. Պրոկյան. Բամբակի «չոռ» հիվանդու-
թյունը:

ԳԻՆՆ Ե 12 ԿՈՊ. ՉԵՐՎ.

Տրամադրություն

